

տասնեք թէ Այրին սեղանը Մսուրին մօտ էր գտնուեր, ինչպէս Յերոնիմոսի օրով, այլ այն տեղը որ Փրկչին Ծննդեան տեղը կը համարուէր: Այրին հիւսիսային կողմն ալ ցոյց կու տային ջրօր մը՝ ուր ինկած էր մոգերուն աստղը, ըստ Եպիփանի:

Յիշատակարան մը Commemoratorium de Casis Dei խորագրով կը գրէ թէ Բեթղեհէմի եկեղեցին Թ. դարուն ունէր տասն և հինգ կղերներ՝ քահանայ եւ վանական, ինչպէս նաեւ երկու մենակեացներ: Բայց Երուսաղէմի կղերը կը շարունակէր Բեթղեհէմի մէջ կատարել Ս. Ծննդեան ասոնը և նոյն եկեղեցիին յատուկ տօները, ինչպէս կը հասկցուի Սոփրոնիոսի վերոյիշեալ խօսքերէն: Հաքէմ Խալիֆայի (1009) քանդումէն զերծ մնաց նաև Բեթղեհէմի Ս. Ծննդեան եկեղեցին բարեբախտ պատճառներու հետևանքով, այնպէս որ 1029ին և 1047ին ուղեգիր ուխտաւորները հիացումով կը յիշեն սլաւական մեծ տօները և հանդիսութիւնները, զոր կը կատարէին քրիստոնեայք Բեթղեհէմի Ս. Ծննդեան եկեղեցիին մէջ:

4. Ս. Ծննդեան եկեղեցին Խաչակիրներէն մինչեւ Սալահէսսին.

Խաչակիրներուն գալէն յառաջ Պաղեստինի գրեթէ բոլոր եկեղեցիները Արաբներուն ձեռքով կործանուեցան, միայն Բեթղեհէմի Ս. Կուսի եկեղեցին ազատ մնաց կործանումէ: Բեթղեհէմցիները Ս. Ծննդեան տաճարին պահպանումին համար, երբ լսեցին թէ Խաչակիրները էմմաուս հասած են ու պիտի յարձակին Երուսաղէմի վրայ, խաչակիր բանակին ընդառաջելով գիմեցին զուքս Կոտըֆրուայի որ փութայ օգնութիւն զրկել. նկատի առնուեցաւ Բեթղեհէմցիներու խնդրանքը և Գուքսը՝ Թանկրէտի և Պուրկի Պաղատինի առաջնորդութեամբ Բեթղեհէմ փութացուց հարիւր ընտիր ասպետներու զունդ մը, որ առաւօտուն կանուխ Բեթղեհէմ հասնելով ցնծութեան ազաղակներով ընդունուեցաւ և առաջնորդուեցաւ զէպի Ս. Ծննդեան եկեղեցին: Տեղացի կըզերը մասնակցեցաւ այս խանդավառ թափօրին, որուն երաժշտական երգերուն խառնուեցան ուրախութեան արցունքներ: Գահաբանութեան երգերէն ու Ս. Այրին այցելութենէն յետոյ, Թանկրէտ ի նշան յաղթութեան զրօշակ մը բարձրացուց Ս. Ծննդեան